

«Վավերացնում են»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
20 փետրվարի 1999 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 փետրվարի 1999 թվականի N 83  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական ակտերի հարկադիր կատարման ապահովման վարչություն՝ 32 հաստիքային միավորով:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքում համապատասխան փոփոխություն կատարելու և դատական ակտերի հարկադիր կատարման ապահովման վարչության աշխատողների պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1999 թվականի փետրվարի 20-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Դարբինյան**